պարփակւում էին, եւ միլիցիոներները, ատրճանակները ձեռքերին, ընկնում էին ամէն մէկի յետեւից, ով արտաքուստ հայի էր նմանում: Հայերին հարիւրներով հաւաքում էին, խմբերի բաժնում, եւ տեղն ու տեղը, հէնց փողոցում հարցուփորձ անում, թէ ձերբակալուածներից ո՛վ ի՛նչքան կարող է վճարել: Ունեւորներից խլում էին վրայի ամբողջ դրամը եւ արձակում, իսկ մնացածներին ծաղրանքով ու փողոցային հայհոյանքներով ուղարկում Մետեխի բերդը (ուր գտնւում է Թիֆլիսի գըլխաւոր բանտը)*: Այդ օրը ձերբակալեցին մօտ* 6000 *հայ... Ձերբակալուածների թւումն էր եւ ճարտարապետ Լեւոն Խատիսեանը, Ալեքսանդըր Խատիսեանի եղբայրը, որին ուղարկել էին Ներսիսեան դպրոց: Նա եւ ուրիշ* 9 *հոգի ազատուեցին վճարելով Լ. Խատիսեանի միջոցով* 50*-ական ռուբլի իւրաքանչիւրի համար, ընդամէնը* 500 *ռուբլի: Ձերբակալուած են* (Թիֆլիսի) *քաղաքային խորհրդի Դաշնակցական Ֆրակցիայի բոլոր անդամները: Ձերբակալուած են շատ հասարակական գործիչներ, որոնց թւում եւ Յովսէփ Խունունցը.* (Ներսիսեան դպրոցի տեսուչ)*, որին յաջորդ օրը բաց թողին:*

«Սրա հետ միասին ձեռնարկուած է հայկական ստացուածքի բռնագրաւմանը... Կառավարութիւնը արգելք է դրել հայերին պատկանող գրեթէ բոլոր առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկների, ընթացիկ հաշիւների եւ սէյֆերի *վրայ: Այժմ պատրաստւում է մի օրինագիծ՝ հայերի ստացուածքը բռնագրաւելու համար, որ, ինչպէս յայտնի է, թէ՛ ազգայնական եւ թէ՛ սոցիալ դեմոկրատ կուսակցութիւնների վաղուցուայ երազն է հանդիսանում: Այդ նկատումով, պարլամենտը շտապողական կարգով օրէնք հանեց, որով արգելւում է անշարժ կալուածքների առուծախը քաղաքներում...*

«Կանանց Բարձրագոյն դպրոցը, որ դեռ ազգայնացուած (վրացիացուած) *չէ, հրաման ստացաւ այս օրերս Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութիւնից, որ իր քիմիական լաբորատորիայի ամբողջ գոյքը անյապաղ յանձնէ վրացի պրոֆեսոր Մելիքովին: Լաբորատորիայի ղեկավարներն են մի ռուս պրոֆեսոր եւ երկու հայ պրեվատ-դոցենտներ՝ Պ. Ղամբարեան եւ Պ. Քալանթարեան: Վերջիններս, նկատելով այդ պահանջը ապօրէն եւ վիրաւորական իրենց համար՝ մերժում են յանձնել գոյքերը Մելիքովին, որովհետեւ իրենք, իբրեւ գիտութեան մարդիկ, միշտ անձնապէս հեռու են եղել ամէն մի քաղաքականութիւնից: Մելիքովը հաղորդում է այս մասին իր իշխանութեանը: Հետեւանքը եղաւ այն, որ յիշեալ երկու հայ դոցենտներին՝ Ղամբարեանին եւ Քալանթարեանին՝ ձերբակալեցին իբրեւ ռազմագերիներ եւ ուղարկեցին ներքին Օրթաճալայի բանտը: Բանտում տեղաւորում են նրանց ոճրագործ թիապարտների նկուղի մէջ: Թիապարտներն իմանալով, որ նորեկները «դաւաճան հայեր են», յարձակւում են նրանց վրայ, կողոպտում վրայի ունեցած-չունեցածը, ինչպէս հարկն է, եւ ապա ստիպում, որ «դաւաճանները» հանուին եւ ադամային մերկութեամբ, բանտարկեալների երգ ու սուլոցով, պարեն նախ նկուղում, ապա նաեւ միջանցքում... Յիշեալ դոցենտների բանտարկութեան ընթացքին, թիապարտները նոյն ծէսին ենթարկում էին բոլոր հայերին, որոնց թւում եւ երկու հայ քահանայի. մէկը* 70*-ամեայ մի ծերունի, իսկ միւսը Քամոյեան եկեղեցու ծխատէր Յովսէփ քահ. Տէր Պետրոսեանը, որոնց նոյնպէս ստիպում էին մերկանդամ պարել թիապարտների երգ ու սուլոցով»...*

Այս ամէնը տեղի է ունենում Թիֆլիսում, հայ-վրացական պատերազմից յետոյ: Թէ ի՛նչ էր կատարւում այդ օրերին դուրսը, գաւառներում, դեռ եւս չգիտէին ոչ Վիրահայոց Ազգային Խորհուրդը եւ ոչ էլ մեր Տեղեկատու Բիւրօն, որովհետեւ, ինչպէս վերջինս ակնարկում է իր հաղորդագրութեան մէջ՝ Թիֆլիսի հայերը կտրուած էին գաւառներից եւ «հայերին խստիւ արգիլուած էր երկաթուղով երթեւեկութիւն կատարել»:

Սակայն, այն, ինչ որ այդ օրերին յայտնի չէր, յայտնի դարձաւ մի քանի շաբաթ անց, երբ երթեւեկը վերսկսուեց, եւ Թիֆլիսի մամուլը հնարաւորութիւն ստացաւ արձագանգ տալու մթութեան մէջ կատարուած դէպքերին: Իսկ դէպքերը ուղղակի զարհուրելի էին: Թիֆլիսի շրջակայ գիւղերը՝ Դաղեթ-Խաչէն,